

ՆՇԽԱՐԳ ՆԱԽՆԵՆՅ

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԶԱՐԱԿԱՆՆԵՐ

Ս. Արոտոյս քիւ 503 ընթիւ գրչագիր Եարակոնցին պարունակած պարականոն շարականներէն փոխեց մի եւս կու տանք ստորեւ, որոնց նպագրութեան ցարդ չենք հանդիպած:

1. Կանոն Ուրեմորդ Աւուր ՄԵՆԳԵԱՆ.— ձեռնարկ ի լուստոյի երեք պատկերներէն վերջ կայ չորրորդ մըն ալ, վեց տուններէ բաղկացած, զի շուր երթալն առած հրահանգով (Թ. 34բ—35):

Յորժամ եկըն Յիսուս մըվըրտիլ ի Յորդանան ի Յովհաննէ, տեսական ընտելեամբ մարմնովն զոր ի մէջն էառ, նորոգել զԱդամ վերստի ի փառս:

Զարհուրեալ Կարապետին երկիւղիւ հայցէր պաղատէր, Տէր ինձ պարտ է ի քէն մըվըրտիլ, բարձող յանցանաց փրկիլ աշխարհի:

Բացան դրունք երկիւց, մեծապայծառ տնտիս պարգեօք, եղաք ժառանգորդք անմահից կենացն, մտեալ բերկեցաք ի վերին սիրովն:

Իջեալ հողոյն սրբոյ մարմնատեսակ կերպիւ ազաւոնոյ, և հանգչէր ի վերայ զազաթան փրկչին, օծեալ սրբութեամբ իւզովն օրհնութեամբ:

Ի վերուստ վըկայեալ վերայնչէր բարբառ հայրական, առէ դայ է իմ որդի ընտրեալ սիրելի ընդ որ հանճեայ: Երախմբեալ բազմութիւն զօրաց երկնաւորաց, վայր իջեալ ի պատիւ վերստին ծննդեանն ահիւ պատմէին զծնեալն զՔրիստոս:

2.— Մեծացուցէնեբու կարգին զըլած է հետեւեալն ալ, բայց սակայն աւելի աւանական է որ ըլլայ խնկարկութեան շարական մը, վասնզի լուսանցքին վրայ չունի նշանակուած մ զիրը, որ զըլած է բոլոր մեծացուցէնեբու առջև առհասարակ: Ասկէ զատ իրմէ առաջ եկող ՕՄԸՆ՝ տածուի խնկոյն, և իրեն յաջորդող ՅՅԱՅՍ՝ տարկ նշխրանաց, առաջինը պարականոն խնկերկորդը հանրածանօթ, շարականները, երկուքն ալ խնկարկութեան շարականներ:

են: Ուստի կրնանք հետեւցնել թէ, այս ալ խնկարկութեան պահուն երգուելիք շարական մըն է (ԳԿ):

Դաւանիմք զեկեալից Աստուած մեզ ի փըրկութիւն, հաշտեցուցանել զարարածս ընդ հորը վերնոց, զի զհոգիդ առաքեսցես մաքրել ըլլմից ի մեղաց մերոց, վասն որոյ և մեք քեզ երկըրպագեմք որ էակիցդ ես հօր և հօգւոյն: Հացըդ կենաց անմահութեան եկեալ ի բաշխումն, որ կերակրէիր զհինն Իսրայէլ երկնային սուրբ մանանայիւն: Հայցեմք ի քէն տալ նոր Իսրայելիս ի կենաց հացդ. վասն որոյ:

Զմայրըն լուստոյ առ քեզ ունիմք բարեխօս, զի ըզխոստացեալ պարգեւսն քո մեզ ընձեռեսցես, և ըզպաշտօնեայ միածնիդ և մօր քո քեզ յաբակցեսցես: Վասն որոյ և մեք վերապոյնեսցուք մօր քո և քեզ փառք յաւիտեան:

3.— Կանոն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին.— Ս. Լուսաւորչի յատուկ ՈՒՎ ԵՐԶՆԻԿԱ և ԱՐՄԱՏ ՆՇՄԱՐԻՍ» շարականներէն վերջ ձեռագիրս ունի հետեւեալ ընտելին (ԳԿ), սա խորագիր ծանօթութեամբ. Անցացան սաս, աւրինակ չկայր որ ի տեղն էի գրելու: Ապա կը յաջորդէ ծանօթ հարցը ՈՒՐ առաքեցեր: Եարականս 10 տուն է, որոնց սկզբնատառերը կը կազմեն ԳՐԻԳՈՐ Ե ՄԵԾ (Թ. 224): Սոյն շարականը ուշագրաւ է իր պարունակած բազմաթիւ բարդ բառերով, որոնցմէ շատեր չեն գտնուիր Հայկազեան բառգիրքի մէջ: Ինչպէս, Բամաշարժ, ստուերակայ, հըրափայլակ, լուսափայլակ, արտակ, նսնմաղիր, զեռարուպեալ, կայսերապետ և համաշարժեալ:

Կահապետ իմն ահաւոր, յանմահարար գետոյն ըլլիսեալ նոր արեգակն, Գրիգորիոս Լուսաւորչի Հայաստանեայց, առաքեալ անուն յառաքելոյն Թադէոսի ը նոր առաքեալ, յանմահութիւն կոչել զՀայաստան:

Բամապետ լոյս և ծագումն, հովիւ բարի քաջ և յաղթող վըկայ բանին, դաւանող զճառազգիսեալ երրեակ լուսոյն, հընդետառան ամ ստուերակային սրգեղեցարքս ը միշտ կենդանոյն, յանմահութիւն:

ի յարգիւնից յաղին դրախտին, ի վեր-
նախնամ ծառաւորանէն ծագումն ան-
ճառ, հրափայլի ամպ լուսափայլակ
տարփումն արտակ. ջահափայլեալ աշ-
տանակի ծագմամբ և նոր Յովհաննէս,
յանմահութիւն .:

Գերազանձ խորան խորոց, խորհրդա-
կան խորհուրդն յայտնեալ եկեղեցւոյ,
նրսեմպիւր հուրն որ ցոյալ մինչև
յերկինս, կայծակնափայլ գեռաբուսեալ
ծաղիկ հաւատոյ, յանմահութիւն .:

Ունել ունէր լոյսն անպատում, զանըստ-
ուեր ծագումն հրափայլակ ճառագայ-
թեալ, զկուսածին լուսոյ ծագումն
արարչական, Աստուած անեղ գոչել ի
Հայաստան պաղատն արքունի, յան-
մահութիւն .:

Բամաշարժ կայսերապետն վերնապար-
գե Թագին օծմամբ արժանացեալ,
սըրտադիրոս [Տըրքատիոս ?] յառաջն-
թաց բարձող լուսոյն վերնատուղին
ընծայեցաւ և մեծ Թագաւորն, նախա-
սկիզբն ծաղիկ հաւատոյ:

Երբեք ի Հարս շարժեալ անշարժն, յոր-
գեգրական հրաւիրանաւն երանելին,
զԳրիգորիոս կացուցէք աթոռոյ իմոյ
հովուապետ, նոր յօրհնութիւն ի հը-
նութիւնէ մեռելութեան և նոր Մովսէ-
սիւն որ է Պետրոս և նոր է Պաւլոս:
Մեծ և անեղ և քանչելի զարմանահրաշ
խորհուրդս ի մեղ ճառագայթեալ, քան-
զի բոց արտափայլեաց ի պիւրուս էից,
զարհուրեցան իմանալեացն զօրս ան-
մահ զըւարթնոցն, տեսանելով զքեզ ի
հանդէսի:

Նւառեռակ փառօք փայլեալ, արքայ
և տէր և քահանայ վերապատուեալ,
արքի և ջահ և լի լուսին յընթացս երկ-
նից, համաշարժեալ Նդիայի և Ննովքայ
և մեծ հայրապետն, վերնական շնոր-
հաց բաշխող:

Մաքրոս ծափի հարեալ Սիոնի, ընդ երկ-
նային հոյս անմարմնոց մաքուր սե-
ռիցն, հրաւիրելով երկուցս ի մի եղա-
նութիւն, յանգրանկածին ելեալ կա-
յանս յերանաւէտ լոյսն անստուեր,
նոր խարայէլ կոչել զՀայաստան:

4.— Կանովն Նեկրոզ Աւուր [Խաչի].—
«Զօրութիւն Սուրբ Խաչի և սի ստուեգա-
նին» օրհնութեան շարականներէն յետոյ
«Այսօր ընդ ամպս» Հարցը կը յաճորդէ, որուն

ներքև իբրև Մեծացուցէ գրուած է հետև-
եալ ԴՁ շարականը (Թ. 247թ): Այս շարա-
կանին առաջին երեք տունները կը գտնուին
Ամատունիի հրատարակութեան մէջ (էջ 2),
իբրև Բ. պատկեր «Յովակիմայ և Աննայի»
Օրհնութեան:

Աշխատեալ հօրն Ննովքայ անախտ ծը-
նունդ անեղծական կենաց գրաւական
առիթ յուսոյ անմահութեան, գոհու-
թեամբ երգով ըզքեղ և միշտ օրհնա-
բանեսցուք:

Կենաց փայտ փրկաւէտ ասպընջական
ազգաց կենդանեաց, ծագման ծիառան
նշան ուխտին խաղաղութեան, գո-
հութեամբ .:

Նահապետին Արքահաճու մայր հաւա-
տոյ լեռուն լեւտեաց, կաթին և մեղու
աղբիւր շնորհաց անհատաբար, գոհու-
թեամբ .:

Նախնոյն Խորայելի խորին խորհուրդ ան-
ու[ա]նպարտութիւն, սանդուղիք երկ-
նաբարձ տուն Աստուծոյ արժանաւոր,
գոհութեամբ .:

5.— Կանովն Ներոզ Աւուրն Սրբոյ
Խաչին Վերացան յերկինս.— «Խաչն կենա-
րարս և ՈՐ յաթոռ փառաց» պատկերնե-
րէն վերջ կայ հետեւեալ նոր շարականը
նոյն Բկ ծայնով (Թ. 248թ):

Համապայծառ և հրաշալի քառակեր-
պեան գրոշմըն լուսոյ, աղիւսանըման
ակըն պատուական և զընդաձե, էա-
կանին եղեր աթոռ, քեզ երկրպա-
գեմըք փայտ կենաց բարձող աստուա-
ծային մարմնոյն և պարծանք ազգի
մարդկան:

Որում երկինք երկնից ոչ բաւէին խորք
անդընդոց սարսեալ դողային, արե-
գակն խաւարեալ ի խաչելութեանն
տեսուն, և լուսինը մըթացեալ յինքն
ընկալեալ ըզլոյսն անըստուերի, քեզ .:
Անյարմարելի գտար ի մարտ եւ բար-
ձրացար ի Գողգոթայ, խաչաշուշ տա-
ղաւար, ըզքեղ մարգարէն յառաջ գու-
շակեաց եօթնարփեան շնորհաց հողոյն
ընդունարան ով սուրբ քառաթեւ, քեզ .:

6.— Կանովն Հինգեբարդ Աւուրն.— «Ան-
պատուեան կառք», «Ընդ երեւումն քո» և
«Որ համագոյդ» ծանօթ շարականներէն
յետոյ Զեռագիրս ունի սա տողը. «Հարցն
զՏապանակին ասա իր սարաւքն, թէ կա-

մեծ զգրածս ողորմա. Այս Ողորմեան կը գտնուի Ս. Վրդ. Ամատունիի հրատարակութեան մէջ (էջ 124), ինչպէս նաեւ յաջորդ Տէր Յերկնիցը ուր զխաչ քո շնորհեցեր, իսկ հետեւեալ ԴՁ Մանկունքը նորէ:

Յոյս և ուզաւէն ետուր ըլխաչ քո մեզ Քրիստոս, կնիք հաստատութեան և պարծանք սուրբ եկեղեցի[ւոյ], վասն որոյ խնայեալ ի մեզ Քրիստոս կամաւոր քո խաչելութեամբն:

Որ բեւեռեցար ի խաչին վասն յանցանաց նախաստեղծին, և անապական արեամբդ քո լուսաւորեցեր զազդ որդւոց մարդկան, վասն որոյ:

Հիւացան զորքք վերինք յորժամ տեւին ըզտէրդ ի խաչին, արեգականքն նընեմացեալ և վարազոյր տաճարին ընդ մէջ հերձեալ, վասն որոյ:

7. — Կանովն Վեցերորդ Աւուրն. — «Անապական սուրբ ըլխաչն» և «Այսոր գեներա» և այլն ծանօթ շարականներէն վերջ հետեւալը կայ իբրեւ Մանկունք (ԴՁ):

Երկրորդ Աղամ էր բազմալ ի քառաթեւ սուրբ խաչին, բաշխող եղև աշխարհի աստուածային պարգեւացն, ընդ անմարմնոցն դասուց նմա երկրորդագանձեմ: Ի տիգախոց ի կողէն տըւաւ մեզ բաժակ վերկութեան, փայտ պատուհասի եղև միզ զէն յաղթող ընդգէմ անբերեոյթ թշնամ[ւոյն], ընդ ան:

Հաղորդեցան արարածք հեղման արեան և մարմնոյն, և փոխառեալ ի կենաց փայտէն յաղազս անխնայ Ազամեայ, ընդ ան:

Յարեկից երեւալ նշան գալոյ Միածնին, յորժամ եկեցէ փառօք Հօր ընդ ամպս երկնից բազմութեամբ, ընդ ան:

8. — Կանովն Համաւեհն Մաթթիոսաց. — Հեւեանալը նոր Տէր Յերկնից մըն է Բի ձայնի վրա (Թ. 264):

Հրաշափառ ճըզնութեամբ պատերազմեալք ընդգէմ թըշնամւոյն, և արեարար վառեալք զինու Սուրբ Հոգւոյն յաղթեցէ անորիցացն, ո՞վ սուրբ վըկայք ըզձեզ ունիւրք բարեխոս առ Տէր վասն անձանց մերոց:

Անտանելի չարչարանացն եղէք վըկայք ճըշմարտութեան, և խաչակից եղէք Որդւոյն Աստուծոյ, ըլլաթժակ մահու արբիք. ուրախութեամբ, ո՞վ սուրբ:

Յաղթանակ համբերութեամբ կատարեցէք զընթացքս ձեր, և փոխեցոյք յերկրայնոցս ի յերկինս, ընկալայք ի Քրիստոսն ըզպըստկս անապական, ո՞վ սուրբ:

Արդ եկայք հաւատացեալք կատարեացւորք ըզխշատակ սրբոց վըկայինցն, զի ձեռնըն սոցա բացցի մեզ դուռն ողորմութեան, ունեկով միշտ բարխոս առ տէր վասն անձանց մերոց:

9. — Կանովն Մերոյն Անթոնի Անապա. — Այս կանոնին ներքե իբրեւ Համարձի կայ հետեւալ շարականը, երկու պատկեր (ԱՁ):

Որ զանմարմնոցն ի մարմնի տըպաւորեցեր երանելի[ւոյն] ի հարբս սըրբոյն Պաղեայ, այսոր տօնեմք ըզխշատակ ճըզնաւորին քո, աղաչանօք սորա կեցոյ ըզմիզ փըրկիչ:

Որ ըզտանջանս յաներեւոյթ թըշնամւոյն ի յանձն էառ երանելին ի հարբս սուրբն Մակար, կոխելով ըզզօրութիւն թըշնամւոյն, աղաչանօք:

Որ անպատու ճըզնութեան համբերեաց երանելին սուրբ Նիզոս, փոխեցաւ այսոր ի կարգըս հրեշտակաց, աղաչանօք:

Որ զերկնայնոցն անախտութիւն ինքեան տարեալ ժուժկալութեամբ երանելին ի հարբս սուրբն Սերնային, վերափոխեցաւ այսոր ի դասս անմարմնոց, աղաչանօք:

Որ քաղութեամբ նահատակեալ վանեաց ըզթըշնամին սուրբն Յովհան, փոխազրեալ այսոր ընդ յաղթող նահատակսն, աղաչանօք:

Կենդանի մեռելութեամբ ճըզնեալ անարատ վարուք երանելի կարբն սուրբն Աբրահամ, յիշատակաւ նորա բարեանցուք զթագաւորն անմահ:

Որ հրեշտակացն զթնութեամբ քաղաքավարեալ ի մարմնի երանելին ի հարբս սուրբն Յւագր, այսոր ի կարգ վերին զօրացն զօրացեալ հոգւով, յիշատակաւ:

Յղէք ժառանգք հաւատոյ ճշմարտութեան երանելի սուրբ հարք անապատի, մաղթելով հայցեմք ի ձերոց ճըզնութեանցդ, բարեխոս իբրուք առ Տէր վասն անցանց մերոց:

Հրաւ. Ն. Վ. ԾովԱԿԱՆՆ